Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի N 732 - Ա
որոշման

«ՆՇԱՆ ԵՎ ԱԻԴԱ ԿԱՐԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՔՈԼԵՋԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ընդլայնել «Նշան և Աիդա Կարայանների անվան» հայկական ստեղծարար տեխնոլոգիաների քոլեջի կրթական ենթակառուցվածքները՝ կառուցելով քոլեջի երկրորդ մասնաշենքը՝ պայմանավորված ուսանողների թվի շարունակական աճով և գործող մասնաշենքի՝ կրթական գործընթացի լիարժեք կազմակերպման համար այլևս բավարար չլինելու հանգամանքով: Նոր մասնաշենքի կառուցումը հնարավորություն կտա ապահովել անհրաժեշտ ուսումնական տարածքներ, բարելավել կրթական միջավայրը, բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը, որակը և ստեղծել պայմաններ քոլեջի հետագա զարգացման ու ուսանողների թվի աճին համընթաց կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
4.	Ծրագիրը կատարողը	«Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամ (Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց 68, ՀՎՀՀ՝ 05532905)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	666,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Նշան և Աիդա Կարայանների անվան» հայկական ստեղծարար տեխնոլոգիաների քոլեջ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) քոլեջի մասնաշենքի նախագծում և կառուցում՝ 204,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը. 2) մասնաշենքի ներքին ինժեներական ցանցերի և համակարգերի կառուցում, արտաքին, ներքին հարդարում և հարակից տարածքի բարեկարգում՝ 432,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը. 3) շինարարական պարագաների և սարքավորումների, տնտեսական պարագաների ձեռքբերում՝ 30,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) քոլեջի մասնաշենքի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 18, 000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի. 2) քոլեջի մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 186,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի. 3) ներքին ինժեներական ցանցերի և համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման և ջրահեռացման) կառուցման աշխատանքների իրականացում՝ 58,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի. 4) մասնաշենքի արտաքին, ներքին հարդարման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 374,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի. 5) շինարարական պարագաների և սարքավորումների ձեռքբերում՝ 15,000,000 դրամ արժողությամբ առանց ավելացված արժեքի հարկի. 6) շինարարական պարագաների և սարքավորումների ներմուծում՝ 8,000,000 դրամ արժողությամբ. 7) տնտեսական պարագաների և ապրանքների ներմուծում՝ 7,000,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	1) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. 2) Աշխատանքի և բարեկեցության նախարարություն՝ ա. սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի զեղչման և կրթաթոշակների տրամադրման ծրագրերի համատեղ իրականացում և ընդլայնում, բ. քոլեջի շրջանավարտների համար աշխատատեղերի ստեղծում և զբաղվածության ապահովում, այդ թվում՝ պետական զբաղվածության ծրագրերում նրանց ընդգրկման միջոցով, գ. աշխատաշուկայի պահանջարկի համատեղ ուսումնասիրություն, գործատուների հետ կապերի ձևավորում, ուսանողների համար պրակտիկայի և առաջին աշխատանքային փորձի հնարավորությունների ստեղծում, 3) Փարաքարի համայնքապետի աշխատակազմ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ